

Աղբբեջանական քաղաքականության մասին համառոտ

Ի դեմս Աղբբեջանի և Թուրքիայի՝ մենք գործ ունենք մի թշնամու հետ, ով վարում է գաղափարաբանորեն մշակված, ռազմավարական տեսակետից հստակեցված քաղաքականություն: Այն ունի իր գերնպատակը՝ վերացնել Հայաստանը որպես պետություն և լավագույն դեպքում հայերին դարձնել թուրքերին սպասարկու մի հանրույթ: Այդ քաղաքականությունն ունի ենթանպատակներ, որոնց հասնելու համար սահմանվում և լուծվում են խնդիրներ: Այդ խնդիրներն ունեն հստակ հերթականություն, լուծման տարբերակներ և փուլեր: Այս պատերազմով թշնամին հասել է մի նպատակի, հաջողել է հերթական փուլը: Հերթի են դրված հաջորդ խնդիրները և փուլերը: Սա իմ՝ Հայաստանի քաղաքացու և հետազոտողի անձնական և մասնագիտական փորձառությունն է:

Բայց որպես մշակութաբան ու հայ մշակույթի պատմության մասնագետ, ուզում եմ խոսել այն բնագավառից, ինչի մասին ավելի լավ պատկերացում ունեմ: Այս առումով համոզված եմ, որ մշակութային ժառանգության հանդեպ աղբբեջանական քաղաքականությունը վերը նշված քաղաքականության օրգանական մասն է: Այն նույնպես ունի իր գերնպատակը՝ հայերին ներկայացնել որպես մշակութային ժառանգություն ու պատմություն չունեցող՝ այսու նաև այս տարածաշրջանում հայրենիք, հայրենիքի պատմական իրավունք չունեցող, այստեղից-անյտեղից եկած կամ բերված ապաքաղաքական ու ապամշակութային մի զանգված: Այդ քաղականությունը նույնպես ունի հստակ սահմանված խնդիրներ, առաջնահերթություններ, փուլաբաժանումներ: Սա կարևոր, էական, առաջնահերթ քաղաքականություն է: Եթե Հայաստանը վերացնում է մշակույթի նախարարությունը, ապա Աղբբեջանը մշակույթը դարձնում է երկրի ղեկավարի քաղաքական առաջնահերթություն: Հայերի անպատմություն ու անմշակույթ, անհայրենիք լինելու թեզը ներկայացնում, հիմնավորում, մանրամասնում է պետության առաջին դեմքը: Նա չի «հնարում», նա սերտել է մանրամասնորեն մշակված մի

պրոպագանդիստական գաղափարաբանություն, որի գերագույն նպատակն է վերացնել, յուրացնել, անվանափոխել, վերագրել այդ ժառանգությունը: Իհարկե, հնարավոր չէ իսպառ վերացնել այդ ողջ ժառանգությունը, ինչպես որ կցանկանային, հնարավոր չէ իսպառ վերացնել հայերին, ինչպես որ կերազեին՝ գոնե ներկա իրավիճակում: Ուրեմն անհրաժեշտ է ավելի ճկուն, հաշվարկված և արդյունավետ մոտեցում: Հիմքում Արևելյան Հայաստանում (և անշուշտ ի մասնավորի Արցախում և հարակից տարածքներում) հայերի ոչ վաղ անցյալում հայտնվելու հնարանքն է: Դրան նվիրված են հարյուրավոր «գիտական» վարժանքներ, դրանով զբաղվում են ակադեմիկոսներ և գիտական կենտրոններ՝ այդ թվում և արտասահմանում: Եթե անցյալ դարի 60-ական թվականներին հայերի «եկվորության» ժամանակը վերագրվում էր արաբական տիրապետությանը, ապա 12-13-րդ դարերին, 90-ական թվականներին այն հասցվեց 19-րդ դար: Մշակութային այն ժառանգությունը, որ ստեղծվել է մինչև 19-րդ դարը՝ ակնհայտ հայկական չէ, այն աղվանական ժառանգություն է: Եվ եթե քրիստոնեական կառույցները ծիսապաշտամունքային առումով չեն հետաքրքրում մահմեդական ադրբեջանցիներին, ապա դրանք հենց այն են, ինչ պետք են Ադրբեջանի միակ պատմական քրիստոնյա հանրույթին՝ ուղիներին: Դե 19-րդ դարի որոշ կառույցներ էլ կարելի է վերագրել ուղղափառներին: Ըստ այդմ՝ առաջին փուլի ժառանգությունը ենթակա է պահպանության, միայն թե պետք է դրանք մաքրել հետսագույն հայկական հավելումներից, որոնք արվել են հայերի կողմից հատուկ՝ այդ ժառանգությունը սեփականացնելու նպատակով: Մա լայն հնարավորություններ է ստեղծում ուղղակիորեն վերացնել ցանկացած ակնհայտ հայկականություն, և իհարկե, նախ և առաջ հայկական արձանագրությունները, խաչքարային հորնիվածքները:

Երկրորդ փուլի ժառանգությունը, որը համարվում է նվաճողական, օկուպանտական՝ ուղղակի ենթակա է վերացման: Առաջին հերթին անկախության տարիներին ստեղծված ժառանգությունը և դրա հետ միասին նաև խորհրդային ժառանգությունը՝ եկեղեցիներ, խաչքարեր, հուշասյուներ ու հուշարձաններ: Այն ինչ

տեսնում ենք այսօր՝ տեսնելու ենք վաղը, մյուս օրը. քերվելու են հայերեն գրերն ու սիմվոլները, քանդվելու են հայկականը հիշեցնող կոթողներն ու կառույցները, հետո՝ եթե հաջողեն՝ նաև բուն եկեղեցական կառույցները՝ երբ «պարզվի», որ Ադրբեջանում չկան այդ կառույցները երկրպագողներ: 21-րդ դարի պատմությունը, ինչպես տեսնում ենք, վանդալներին նման հիանալի առիթներ շատ է տալիս:

Եվ կարևոր մի նկատառում էլ: Ադրբեջանը դա թաքուն չի անում: Համոզված եմ, որ այդ ավերումները, բնաջնջումը, ցուցադրական պղծումը հատուկ, պլանավորած պրոպագանդիստական արշավ է, որի առաջնային նպատակն է մշակութային ու հոգեկան տրավմա հասցնել ծանր պարտություն կրած հայերին: Վերքի վրա պիտի հա աղ լցնել: Հայերը պիտի համոզվեն, որ այն ժառանգությունը, որ համարում են իրենցը՝ իրենցը չէ: Եվ եթե անգամ համոզված են, որ իրենցն է՝ ապա թող հասկանան, որ այդ ժառանգությունն անգոր է, այն որևէ կերպ չի կարող օգնել իրենց, համախմբել կամ գորավիզ լինել: Ի վերջո ո՞ւմ է պետք այն ժառանգությունը, որ միայն տրավմա կարող է բերել:

Այսօր չեմ գրում մեր շփոթվածության ու անգործության մասին: Ինձ հաճախ են հարցնում՝ ո՞րն է մեր պատասխանը: Կարծում եմ, որ թշնամուն պատասխանելու համար, նախ և առաջ պիտի հասկանալ նրա նպատակը, գործելակերպն ու իրագործման մեխանիզմները:

Համլետ Պետրոսյան